

## ՊԵՏԱԿԱՆ

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՆԱՄԷԱՐ

#### ՀԱՆԼԷՊՅԻ

(ՊԱՐՈՆՅԵՐ)

Մատենան է Մասեր Նոր Կսակարանի և կը պարունակէ թղ. 2ա-235ա, Կաթողիկէայ թուղթք Յակոբայ, Պետրոսի, Յովհաննու և Յուդայի առաքելոց և չորեք-տասան թուղթք Պօղոսի և Յայտնութիւն Յովհաննու Աւետարանչի:

Գլխաւոր Յիւսակարան. — Փառք, պատիւ, գոնութիւն և երկրպագութիւն համագոյ, համարուն երբեակ անձնաւորութեան և մի և անբաժանելի տէրութեան և աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հօգւոյն սրբոյ ամէն: Որ կարողութեամբ Աստուծոյ ցանկացող եղայ այս սուրբ գրքիս, որ կուչ Նոր Կտակարան, և աղօթիւք և շնորհիւ սորին ըսկայ և աւարտեցի ի լաւ և ընտիր օրինակէ, ես մեղաւոր Հայկապեցի Ղալամբար Ովանէս Բանանայս, ձեռամբ իմով գրեցի, որ անուամբս եմ և գործովս մեղօք իլի, ի սուրբ քաղաքն Սեուսաղիմ, ի գուռն Սուրբ Յակոբայ Հայոց վանքն, ընդ հովանեաւ լուսարուիս Սուրբ Գերեզմանին և այլ տնօրինականացն և Սրբոյ Գլխադիրն, Սրբոյ Յակոբայ Տեառնեղբօրն, ի հայրապետութեան տանն Հայոց Ներկապար կաթողիկոսին, և ի Թուսականութեան մերոյ ՌձԼԻ՛՛ ամին, Նոյեմբեր ամսոյ ԺՁ օրն հինգշաբթի եղև աւարտումս գրոյս, ի վայելումս մեղաւոր Ովանէս Բանանայիս, որ բազում մեղօք իլի եմ, որոյ ոչ եմ եղեալ արժանի յիշման վասն չար գործոյն իմոյ: Որ բազում փափաքանօք գրեցի զայս սուրբ գրքս վասն անձին իմոյ, Կացցէ և մնացէ անջինջ յիշատակ սուրբ գիրքս ի սուրբ քաղաքն Սեուսաղիմ ի գուռն Սուրբ Յակոբայ վասն մեղաւորիս հոգւոյն և իրեցիկոյս Ալմասին և հօրս Իմիւրզին և մօրս մահտեսի Կուլիսանին և քրւերս մահտեսի Մարիամին, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի: Արդ երես անկեալ աղաչեմ զձեզ, ով լոյ-

սերամ մանկունք սուրբ եկեղեցւոյս, թէ կարդալով կամ տեսանելով և կամ օրինակելով, յիշեալիք ի մաքրափայլ յաղօթք ձեր զՅարախացեալս մեղաց վիրօք զՈվանէս գրչիկս, և դուք յիշեալ լիջիք և Փրկչին Յիսուսի ամէն: Դարձեալ Աստուած ողորմի ասացէք մեր վարպետին Տէր Աստուածասուրին որ մականուամբ Աւագակ կոչի, որ բազում աշխատանք ունի ի վերայ անարժանիս, զոր և երկնաւոր վարպետն իւրեան վարձահատոյց լիցի, ամէն: Այլ և լաւ պահօք և խնամ տանօք սուրբ գրքիս վարձն ի Գրիստոսէ առցէ, ամէն: Հայր . . . :

Մասնաւոր Յիւսակարանքիւմ. — Թղ. 1բ, կարմիր թանաքով. «Բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնին և Ովանէս Կարապետին աւգնեալ Գրիստոս Աստուած մեղաւոր Հայկապեցի Ղալմբար Տէր Ովանէս (բառին մէջ սև թանաքով նոյնինքն գրիչը ետքէն աւելցուցած Պարոնէսք) ծառայիս (աւելցուցած ամեն): Թվին ՌձԼԻ՛՛. յունիս ամսոյ ԺԵ. օրն երեքշաբթի սրբոց տօնին Հոփիսմէից և Յուլիանեա, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի, սոցին բարեխօսութեամբ սկսայ (աւելցուցած գրել): Աստուած ի կատար հանէ (աւելցուցած ամեն)»:

Թղ. 2ա, օտար գրչէ մեծ նոսր գրով. «Յիշատակ է Սեուսաղիմ ի գուռն Սրբոյն Յակոբայ»:

Թղ. 57բ, կարմիրով, օտար գրչէ. «Թվին ՌձԼԻ՛՛. յունիս ամսոյ ԺԵ. Զամարիեայ Զեկեպին զափուշիով եկաւ ի սուրբ քաղաքն Սեուսաղիմ, թէհրիր արար զհոռումին եկեղեցիքն և ըզֆրեանկին և ըզհայոց: Աստուած ի բարին կատարէ: Նորայ համար գրեցի որ ի դիպող ժամու պէտք լինի»:

Թղ. 156ա, ստորև տարբեր գրչէ մանր նոսրագրով. «Թվին ՌձԼ. աւգոստոսի առջի օրն Սուրբ Սեուսաղիմ անձրև եկաւ»:

Թղ. 187բ, «Ո՛հ թէ քանի դատիմ ի հետ մեղաց և շաղախիմ ի մէջ անօրէնութեանց, աղաչեմ զձեզ հայրք իմ և եղբայրք, հայցեցէ ի Գրիստոսէ զթողու թիւն անցանաց իմօք, և Գրիստոս Աստուած թողցէ ձեզ իւր միւսանգամ գալստեանն անհղ ատենին ամէն»:

Քշ. 206ա,

«Յորժամ գայցես կրկին յերկիր ի դաս արդար,  
Հայցմամբ սրբոցս քո ընդ առաջ բռչին  
պայծառ».

Նայ գիտ ընկալ Ովանէս գրչիկս եւ ըզխաւար,  
Մի գասիցիմ արդարութեամբ այլ գրաբար»:

Քշ. 206բ, հանելուկ ըլլաւ կ'երեւի՝

«Ոչ եմ կարօտ գոյոյն սեւման,  
Եւ ոչ ծնողաց իմոյ գոյութեան:  
Որով մաշեալ ունիմ զվախման,  
Ղարձեալ ունիմ առիթ ծննդեան:

Նոյն մի թեսակ եւ մի անհաս,  
այլոց զղայնոց անհամեմատ:  
Երկարակեաց անբռնաղոյ,  
անհայր անմայր անզոյց ազատ:

Ես քառ վանկ հինգ ամանակ,  
կազմեալ ճառիւմ երից երկակ:  
Նախասեսիցըն գերունակ,  
ազգաց բազմաց դասսիրակ:

Ձայն եռավանգ ճառ վեցեկի,  
քառ ամանակ ըստ հազարի:  
Քան զերկրաւորս գեր անցանի,  
ի մեր յեզուս անման ստուգի:

Գլուխ եւ աւարտ եոյն ճառ կայեալ,  
հինգ ամանակ եւ վանգ եղեալ:  
Նահասակաց վարձ սանձմանեալ,  
անուն պսակ ստուգաբանեալ»:

«ԸզՀայապեցի Ղալեմեար Տէր Ովանէս  
(լուսանցքին վրայ ետքէն աւելցուցած Պա-  
րոնճէր) մեղապարտ գծողս յիշեցէք և գրիս  
անմեղադիր լիւրեք, և դուք յիշեալ լիջէք  
ի Քրիստոսէ Աստուծոյ սերոյ, ամէն»:

«Քաւիս (լուսանցքին վրայ աւելցու-  
ցած մուղղան) վանէս ըլ Հայապի, գաղիպ  
ըլ հրեւոյ՛ք ըզգըրու Ֆի սալաթէքս, Ալա-  
ըլթգրօգօն Ֆի մալազուք ըսամմալթ»:

Կարմիրով. «Գու քիթապի կօրքի պի-  
ղայ ըրամմաթ ղըլանայ ճանապի պարի  
կանսինայ ըրամմաթ ղըլան»:

Քշ. 235ա, «Եւ մեղապարտ Տէր Ովա-  
նէսին, գծադրողի այսո՛ւ տառին, և զիս մե-  
ղօքս լուծեւոյ, օգեալ կրկին կենդանացոյ»:

Քշ. 235բ, «Ես թարախեալս մեղաց  
վիրաւք և անբշխելի բեկեալ յոգիս խղրեմ  
մոխրամած դիմաւք առ ոտս սրբազանիցդ  
հայցել թողութիւն մեղաց անթուրիջձօղի

սորին Հայապեցի Ղալամբար Ովանէս լու-  
սայօհնէի»:

Անդ.

«Յողեայ ի գլուխ քո(յ)ին սիրով Տէր

բարեբար,

գի առաքանս ընդ քեզ մօցեմ սիրովա-

բար,

ես Տէր Ովանէսս ո՛ր եմ մեղաց սիրով

լցեալ,

դարձոյ ի սէր աստուածային քո բարե-


բար,

մաքեայ հրոյով քոյին սիրոյ 'ւարայ

պայծառ,

գի ողորմած ես եւ գրած 'ւանիւաչար»:

Քշ. 2ա, 58ա, 83ա, 207ա, 235բ,  
կայ գրչիս անձնական կնիքը.



Տարի մը վերջ, 1686ին, Տէր Յովան-  
նէս քահանայ, դա՛րձեալ Երուսաղէմի մէջ,  
գրած է Ս. Թակոբեանց Զեռագրաց Մատե-  
նադարանի թիւ 1240 Թիւոս Որդին, որուն  
նկարագիրն ու յիշատակարանները կուտամ  
ստորեւ.

Թուղթ՝ 384. — Մեծուքիւն՝ 17×11,2  
սնդմ. — Դրուքիւն՝ միասին՝ 12×6,8. —  
Տողթ՝ 19. — Թերթ՝ ԼԹ=32, իւրաքան-  
չիւրը 12 թուղթ (Ա՝ 18, ԼԹ՝ 6). — Նիւթ՝  
տոկուն և յղկուած դեղնադոյն թուղթ, մի-  
ջակ հաստութեամբ. — Կազմ՝ փայտեայ,  
դեղին կաշիով պատած, զարդարուն. —  
Հանգամանք՝ լաւ պահուած, միայն տեղ  
տեղ լուսանցքները թեթևօրէն ցեցակեր. —  
Դիր՝ նոսրգիր, ըստ բաւականին վարժ. —  
Ջարդագիր՝ գլուխներու առաջին տառերը  
և թղ. 8ա առաջին տողը, ծաղկազիր և  
թուշնազիր, կարմիր և կապոյտ. — Խորանք՝  
թղ. 8ա, 200ա, 257ա, 329ա, կարմիր և  
կապոյտ. — Լուսանցադարձ՝ խորաններու  
քովերը, կարմիր և կապոյտ. — Խորագիր՝  
կարմիր նոսր գիր. — Դասարկ թուղթ 1-3  
և 383բ-384բ. — Ժամանակ՝ ՌՃԼԷ (= 1686). — Դրիչ՝ Թուղաննէս քահանայ Ղա-  
լեմեար Հալեպցի. — Տեղի՝ Երուսաղէմ,  
Ս. Թակոբայ վանք. — Սացող՝ գրիչը. —  
Յիշատակագրութիւն՝ թղ. 382ա, 7բ, 155ա,

199ա, 256բ, 328բ, — ԿԵԻԲ՝ 7բ, 8ա, 155բ, 256բ, 328բ, 382ա, Քի Մու Յովանու Յպիսկպու Հլպցի բվ ՌձԼԷ (= 1688):

Մատենան է Ներսեսի Շնորհալույ Յիսուս Ռդի Էայլն, որ կը բովանդակէ՝

1. — Թղ. 8ա—113բ, «Յիսուս որդի հօր միածին» են.:

2. — Թղ. 113բ—155ա, «Տեառն Ներսեսի հայոց կաթողիկոսի, ասացեալ բան հաւատոյ: Ոտանաւոր տաղիւ չափոյ: Խոստովանիմ Աստուած ըզհայր անծին, անեղ և անբակիզն» են.:

3. — Թղ. 155ա—199ա, «Շարադրութիւն հոմերական վիպասանութեամբ սակ հայկազան սեռի և Արշակունեացն զարմի, ի սկզբանցն մինչև ի վախճան: Առացեալ Ներսեսի եղբոր կաթողիկոսի Հայոց Տեառն Գրիգորիս, յիւրական նախնիս, ի համբալկութեան զնեղով պոսի: Պարտական է հաւր որդի, հատուցանել վարձս ծննդի» են.:

4. — Թղ. 199ա—256բ, «Երբս ոգեալ Տեառն Ներսեսի և սրբազան կաթողիկոսի, եղբաւր սրբոյն Գրիգորիսի Հայոց մեծի հայրապետի: Բան ասացեալ բարաւանական, տաղիւ չափեալ հոմերական, խաւսեալ բանիւ ողբերգական, վասն յնդեսիս մեծի առման: Ի թուականիս հինգ հարիւրի և իննըսուն ութերկի, քսան 'ւերեք Դեկտեմբերի, երրորդ ժամու աւր շաբաթի: Ողբացէք եկեղեցիք հարսունք վերին առաքապոսի»:

5. — Թղ. 256բ—265բ, «Ներբողեան կենսատու սուրբ խաչին, զոր մեծ քահանայապետն Աստուծոյ և հովին քաջ տէր Ներսէս Տարսնեան շարայաբեալ ոտանաւոր չափ, առ ի սուրբ անուէն մերձէ Դաւթի անյաղթ փիլիսոփի, որ ասի: Բարձրացուցէ՛ք զտէր Աստուած մեր միաբան» են.:

6. — Թղ. 266ա—276բ, «Տեառն Ներսեսի ասացեալ յաղաքս կենսաբեր փայտին: Աւրհնեալ ես փայտ քրիստոսական, աստուածազարդըդ սուրբ Նշան» են.:

7. — Թղ. 276բ—285ա, «Տեառն Ներսեսի որդոյ տիեզերական վարդապետի և կաթողիկոսի հայոց ասացեալ յաղաքս երկնի և զարդուց նորա բարաւանաբար ի դիմաց նորին: Ի չափ երկոտասանին պարզեալ ոտից, ի խնդրոյ առն բժշկապետի աստղագիտի Մխիթարայ: Ի մեղական գո-

ւով բնութիւն և սկզբնական, յանեղէն ձգեալ կամար անզուգական» են.:

8. — Թղ. 285ա—288ա, «Նորին այլաչափ տաղք, ի խնդրո անուան նախագիծ տառից տան ասացեալ: Միշտ էիդ անեղ բնութիւն բնաւորեցան, անեղիդ անմահութիւն հետեւեցան» են.:

Տունեբու սկզբնատառերը կը յօդեն, Մխիթար բժիշկ ընկալ ի Ներսէսի գայս բան:

9. — Թղ. 288ա—292ա, «Նորին Տեառն Ներսէսի բան խրատու ուսումնականաց մանկանց, ի դիմաց այրուքնից տառից ոտանաւոր չափով: Այրն առաջին ըզքեղ տղայ, հանէ յիմաստըն գերակայ» են.:

10. — Թղ. 292բ—296բ, «Նորին բան հաւատոյ վասն անեղին և եղեւոց, բարաւանաբար: Ի դիմաց հայկական տառից չափաբերմամբ ողբեալ ի Ներսէսէ Հայոց կաթողիկոսէ: Այրն անբակիզն ասէ զԱստուած, յանեղ բնութիւն ոչ արարած» են.:

11. — Թղ. 297ա—305ա, «Նորին բան ներտաղական, խրատ յոգւոց համայնից, ի դիմաց մերոյին տառից տանց յիւրաքանչիւրսն քառից: Այրն Աստուծոյ զքեզ մերձակայ, լինել խրատէ թէ հաւատայ» են.:

12. — Թղ. 305բ—309բ, «Առաքել վարդապետէ ասացեալ ոտանաւոր չափով ըստ տառից այրուքնիցն խրատ մանկան: Այրն Աստուծոյ է օրինակ, ուսուցանէ զքեզ համարձակ» են.:

13. — Թղ. 310ա—316բ, «Տեառն Ներսեսի կաթողիկոսի Հայոց, բան հոմերական ասացեալ յիշատակարան Առականց» են.:

«Աստուածեղէն հոգւովն»: Եւ յաջորդները:

14. — Թղ. 316բ—319բ, «Թուղթ մխիթարական Տեառն Ներսեսի կաթողիկոսի հայոց առ ոմն իշխան յարեւելեան վասն որդոյ իւրոյ տարածամ մեռելոյ: Անտեսն է յոյսն աստուածային, ըստ առաքելոյ անսուտ բանին» են.:

15. — Թղ. 320ա—328բ, «Նորին Ներսեսի ասացեալ բան մաղթանաց» են.:

«Աստուած անեղ անհասական, հայր զթութեանց ինձ ողորմեա» են.:

16. — Թղ. 328բ—356բ, «Դովետս ներբողական պարագրական բանիւ յաղաքս վարուց մեծի հայրապետին Տեառն Ներսեսի Կլայեցւոյ Հայոց կաթողիկոսի և տիեզերայոյս վարդապետի սրբոյ: Ասացեալ Տեառն

Ներսեսի Լամբրոնացու արքեպիսկոպոսի Տարսնի կիլիկեցւոյ և սորա հարազատի որդոյ դստեր եղբարւ: Շարժեալս տիպէ հարկ տէրունի, ըզգադարունն իմրս բանիւն են:

17. — Թղ. 356բ—360ա, «Ուսանաւոր Առաքել վարդապետի ասացեալ վասն Հի փերթ վերոյ: Տէր Առաքել գիտող Սինեաց, զուրկ և Թափուր ամէն շնորհաց» են:

18. — Թղ. 360ա—381բ, «Տեսնան Ներսէսի Հայոց կաթողիկոսի ասացեալ է հանելուկս վասն ուրախութեան մարդկան, և զնէ սկիզբն զԱզամ: Կաթողիկոսն էր անշալատ, յիւր վիհակէն ոք չէր ի գատ» են:

Յիսասակագրութիւնք. — «Փառք պատիւ գտնութիւն և երկբայագութիւն համալոյ համարուն երրեակ անձնաորութեան Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ յաւիտեան ամէն: Որ կարողութեամբն Աստուծոյ ըսկսայ և շնորհիւ նորին աւարտեցի գիրքս այս որ կոչի Յիսուս Որդի, ի լաւ և ընտիր արինակէ, ձեռամբ Հայկաթի Ղալիմեար Ովանէս Բանանայի, ի սուրբ քաղաքն յերուսաղեմ, ի վանքն Սուրբ Յակոբայ, ընդ հոգւանեալ Սուրբ Գրիգորիին և այլ խորանացն, ի հայրապետութեանն տանն յարեւելան Սուրբ Էջմիածնայ եղիպար կաթողիկոսին, զոր Տէր զինքն անփորձ պահեցէ ընդ յերկայն աւուրս: Եւ ի Թուականութեանն ՌձԼԵ Աւգոստոս ամսոյն Ժգ յեղև յաւարտունն գրոյս, ի վայելունն սորին ինձ մեղաւոր Տէր Ովանէսիս որչափ որ կենդանի եմ, և (յ)ետ մահուանն իմոյ մնացէ յիշատակ ի սուրբ քաղաքն երուսաղէմ ի զուռն Սուրբ Յակոբայ, յիշատակ Տէր Ովանէսին եւ բանրիշին իմոյ Ելմաս խաբունին եւ հաւրն իմոյ Ամիր խաւանային եւ մօրն իմոյ Կուլիսեան մահեսեուն եւ քըւերն իմոյ մանեստի Մարիեամին եւ եղբարցն իմոց Պարսոսին եւ մահեստի Յոնանին եւ քեհորդոյն իմոյ Աւլամին եւ ամենայն արեան մերձաւորաց իմոց Աստուած ողորմի ասացէք: Դարձեալ Աստուած ողորմի ասացէք իմ վարպետին Տէր Աստուածասուրին որ մահանուամք Աւագալ ասնն, որ բազում աշխատութիւն ունի ի վերայ անարժանիս, զոր և երկնաւոր վարդապետն իւրեան վարձահատոյց լիցի, ամէն: Այլ և լաւ պահողն և խնամք տանողն գրքիս զվարձն ի Բրիստոնէ առցէ, ամէն: Հայր մեր որ յերկն:

Թղ. 7բ, «Աստուած ողորմի ասացէք Թերնիման երջերին և կողակցուն Թուրվանէին և որդոցն Կուլամիրին, Մկրչիին և Խալասուրին, որ զՅիսուս Որդի գրքիս ըզթուսին նայ ետուր յիշատակ: Յիշեցէք զհոգեւոր որդեանին իմ գօրհացու Ղուկասն որ ըզթուշտն նշանց և կոկից, և զուք յիշեալ լիլիք ի Բրիստոնէ:

«Թվին ՌձԼԴ Գեկտեմբեր ամսոյ ի եօթն Սուրբ Յակոբայ պահոց շարթուն պատկեր աւուրն Սուրբ Միխայայ տոնին սկսայ գրել: Աստուած ի կատար հանէ բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց և Սրբոյն Միխայայ և Դարուսի, որոց յիշատակն օրհնութեամբ հղիցի: Ազնեայ հոգիդ սուրբ Հայապեցի Ղալիմեար մեղաւոր Տիր Ովանէս Պարոնեհ ծառայողս:

Թղ. 155ա, «Աղաչեմ զձեզ ով ընթերցողք սուրբ զըրոյս, յիշեցէք ի յաղօթս ձեր զանաւորան զըծող զըրոյս զՀայապեցի Ղալիմեար Տէր Ովանէսն, և զուք յիշեալ լիլիք ի Բրիստոնէ: Ամէն, Հայր»:

Թղ. 199ա, բ, «Զգծող սորա Հայապեցի անմիտ երեցս յիշեցէք ի Տէր ով եղբարք»:

«Արա արժան գգրիս եղկելի, Հղտէր Ովանէսս ողորմելի: Յիսուս Բրիստոս արայ երեմի, Սուրբ յարութեանդ աներեկի: Եւ որ հոգով զիս գիեցոյց, Ուսմամբ երկաւ խաւեալ լըցոյց, Լիցի արժան փոյն փառաց, Եւ անբառամ սուրբ պրսակաց»:

Թղ. 256բ,

«Եւ զիս արժան արայ մասանց, Զփոսեալ գրիս ի մէջ մեղաց, Կանգնեալ կրկին քան զճոհ ծնած, Զի ողորմած ես եւ զքրքած»:

Թղ. 328բ, «ԶՀայապեցի Ղալիմեար գծող Տէր Ովանէսս յիշեցէք ի Բրիստոն, և զուք յիշեալ լիլիք»:

Թղ. 378ա,

«Ես մեղապարտ Տէր Ովանէսին, Գրձագրողի այսմ քառին, Եւ զիս մեղաւրս լուծելոյ, Աւղեալ կրկին կենդանացոյ»:

«Միաբանք և Այցելուք» ի Գեր. Կեղիսակը այնպէս ենթադրած է որ Հայամաքեար Յովհաննէս քչյ. և Հայամաքեար Յով-

հաննէս Եպիսկոպոս զատ զատ անձեր են, ինչ որ չէ անշուշտ:

Հոգեւոր եւ Թերեւս վարչական կրկին մարդերու մէջ Տէր Յովհաննէսի ծառայութիւնները կ'երեւայ ուղարկութեան առարկայ կ'ըլլան օրուան պատրիարքէն և միաբանութեան գլխաւորներէն, որ 1688ին զինքը կը գտնենք Եպիսկոպոս, ինչպէս որ կը վկայէ ութանկիւն քառասուն իր կնիքը: Եղիազար Այնթապցի կը կարծենք որ մեծագոյն բաժինը ունեցած ըլլալու է սոյն զնախառնութեան մէջ: Հաւանական չենք նկատեր որ Յովհաննէս մինչև էմիգրանտ ուղևորած ըլլայ Եպիսկոպոս ձեռնադրուելու համար. ճիշտ պիտի ըլլար ընդունիլ որ կամ Հալէպի մէջ, Երբև իր ձեռնադրուելու, և կամ Սիւրի մէջ ձեռնադրուեցաւ Սոյո Գրիգոր Բ. կաթողիկոսէն: 1685ին Երուսաղէմի մէջ գրած Նոր Կտակարանի մասերուն քանի մը լուսանցքներուն վրայ, ետքէն, այսինքն Եպիսկոպոս ձեռնադրուելէն ետքը, աւելցուցած է իր իսկ գրչով, պարոնսքը, մութքան բառերը, յատկապէս ճշգրիտ համար՝ որ Տէր Յովհաննէս քնյ. և Տէր Յովհաննէս եպս. Պարոնսքը մինչոյն անձն է: Երուսաղէմի պատրիարքներ ԺԷ. զարուն ընդհանրապէս պարոնսք կոչուած են. մեր կարծիքով ասիկա բարբերէ սեփեմէ կամ Փրանսիոյն Monseigneur բառերուն նշանակութեամբ գործածուած կրնայ ըլլալ: Այսօրհան կը կարծէ թէ պարոնսքը կը կոչուէին այն Եպիսկոպոսները որոնք չունէին ծայրագոյն վարդապետութեան աստիճան, զոր ունեցողները աւելի վարդապետ կ'անուանէին իրենց զիրենք, եթէ նոյն իսկ Եպիսկոպոս, կամ արքեպիսկոպոս և կամ պատրիարք ալ եղած ըլլային: Եթէ նոյն տարիներուն Հալէպի առաջնորդական աթոռը Թափուր ձեռնած ըլլար, Թերեւս ճիշտ ըլլար խորհիլ՝ որ Յովհաննէս քնյ. Ղայաթեար իր հայրենիք Հալէպի վրայ Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ. յայտնի է որ ան ձեռնադրուած է Երուսաղէմի համար և ուր ձեռնադրուած է մինչև իր կեանքի վերջը, զի Հալէպի մէջ իր մասին ունէ գիրք և յիշատակութեան չենք հանդիպած երբեք և կ'ենթադրենք որ ձեռնադրուելէն յետոյ երկար ալ չապրեցաւ:

Հայրիկ

ԱՐՏՍԱՒԱՋԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

## ՄՍՏԵՆԱԹՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԿՐԵՐ. (հառնային).

Ա. Շարֆ. Զայնապէք եւ դաճառոնք Յովսէփ Վ. Գալայնեան. Վիլհելմ. Մխիթարեան  
սպարան. զին՝ 15 ժամ:

Գործ մը, արդարև, որ թէև իր հետ չի բերեր մեր եկեղեցական երաժշտութեան կալուածէն ներս նոր արտ մը բանալու գերն ու համարը, և սակայն — այս բոլորէն անկախաբար — պէտք է նկատի առնել զայն նոյնիսկ անոր համար որ անիկա երախայրիքն է հայ երաժշտական մտածողութեան մէջ գէպի լուսաւոր ապագայ մը գիտող հոգիի մը ճիգերուն:

Հ. Գալայնեան, որ նորահաս մըն է և իր գործին համար անհրաժեշտ պատրաստութեամբ ուժաւորուած, իր այս երկասիրութեամբ կուգայ թիւ մը ևս աւելցնել հայ կաթողիկէ երաժշտադէտ-վարդապետներու շարքին վրայ, շատ մօտիկը մեծատաղանդ Հ. Տայիանի և Վիլհելմական Հ. Սրապեանի:

Գեղեցիկ նախաբանի մը մէջ, նախ, Հ. Յովսէփ կը ներկայացնէ իր այս գործին հանգամանքը, ճաշանդականն ևս ճորտ. Երաժշտութեան եղանակներ մատնանշելով հոն. և ապա՝ որպէսզի մեր մէջ լաւագոյն տըրամադրութիւն մը ստեղծէ գէպի իր անձնական ստեղծագործութիւնները՝ կը վըստահացնէ զմեզ թէ ջանացած է հալկական դրոմ դնել այդ եղանակներուն վեջ ալ:

Առաջին պատհանութեամբ նոյնիսկ ըսենք թէ անարդար է իր այս յայտարարութիւնը ճորտ շարադրուած այդ կտորներուն մասին, և մենք կ'ստիպուինք դուրս ձգել զանոնք մեր ներկայ քննադատական ուսումնասիրութենէն, խորապէս համոզուած ըլլալով որ անոնք բացարձակապէս ոչինչ ունին հայեցի իրենց հետ: (\*)

(\*) Այս ուսումնասիրութեան մէջ նկատի առնուած են միայն հետեւեալ երգերն ու արտականքներն:

- |                    |                       |
|--------------------|-----------------------|
| 1. Այսոր յարեալ    | 5. Սրբոհի Մարիամ      |
| 2. Զարթիվ փառք իմ  | 6. Փութաքի յօգնութիւն |
| 3. Այսոր աւախացեալ | 7. Տարածեալ           |
| 4. Կեցա զարդի      | 8. Սուրբ, Սուրբ       |
|                    | 9. Հոգի Աստուծոյ      |